Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 62-Ա, 63-Ա, 64-Ն, 65-Ա, 66-Ա, 67-Ա ԵՎ 70-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 62-Ա որոշմամբ հաստատված օրակարգի 2-րդ հարցի մեջ «դրույքաչափերի սահմանման և Հայաստանի Հանրապետության Շիրակի» բառերից հետո անհրաժեշտ է գրառել «մարզի» բառը:

Թիվ 63-Ա որոշման մեջ անհրաժեշտ է գրառել գույքագրման տարեթիվը, ամիսը և ամսաթիվը, բացի այդ որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի դրույթներն անհրաժեշտ է համարակալել, իսկ վերջին էջում ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնի անվանումն անհրաժեշտ է գրառել լրիվությամբ:

Թիվ 64-Ն որոշման վերնագրում «տուրքերի և վճարների» բառերից հետո գրառված «գոտիավորման» բառն ավելորդ է:

Որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետին, իսկ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ» և «11-րդ հոդվածի 1-ին» բառերից հետո գրառված «կետի» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասի» բառով (հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս):

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ, 14-րդ և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածներին կատարված հղումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, համաձայն որի հղումները կատարվում են հստակ և ուղղակի: Հետևաբար անհրաժեշտ է հղում կատարել նշված հոդվածների համապատասխան դրույթներին (հղումները կատարելով ըստ հերթականության՝ օրենքի հոդվածին, մասին, կետին, ենթակետին և պարբերությանը):

Բացի այդ, որոշման նախաբանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 8-րդ, 14-րդ հոդվածների դրույթներով» բառերն ավելորդ են, քանի որ նշված օրենքի 8-րդ հոդվածին կատարված հղումը սխալ է, իսկ 5-րդ և 14-րդ հոդվածներին կատարված հղումները կրկնվում են:

Որոշման թիվ 1 հավելվածի 8-րդ կետում «վարչական տարածքում» բառերից հետո գրառված «Առրտրի» բառն անհրաժեշտ է փոխարինել «Առևտրի» բառով:

Թիվ 2 հավելվածի 7-րդ կետի դրույթների համարակալումը և նույն հավելվածի 19-րդ կետի հղումը սխալ են կատարված:

Թիվ թիվ 64-Ն, 65-Ա, 66-Ա որոշումների 2-րդ և թիվ 67-Ա որոշման 3-րդ կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Թիվ 66-Ա որոշման հավելվածի համարակալումը սխալ է:

Թիվ 67-Ա որոշման թիվ 1 հավելվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված պաշտոնների անվանումներն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 29-Ն հրամանի 1-ին կետով հաստատված ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակի (թիվ 1 հավելված) 2-րդ և 4-րդ կետերում նշված պաշտոնների անվանումներին:

Բացի այդ, նույն հավելվածի 7-րդ և 8-րդ կետերում նշված պաշտոնների հաստիքային միավորները չեն համապատասխանում ՀՀ կրթության և գիտության նախարարի վերը նշված հրամանի 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածի պահանջներին:

Թիվ 70-Ն որոշման հավելվածի վերնագրում Շիրակի մարզի բառերից հետո գրառված Արփի բառն անհրաժեշտ է փոխարինել Ամասիա բառով, քանի որ Ամասիա համայնքի ավագանին Արփի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունները սահմանելու իրավասություն չունի:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
02.02.2021թ.